

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 84

22 մայիսի, 2020 թվական

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով, և որոշման հավելվածի 20-րդ կետով, ՀՀ պարետի 2020 թվականի Մայիսի 3-ի N 63 որոշման Հավելված N 8-ով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 5-ի N 1319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի մայիսի 12-ին իրականացված մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրությունը՝

1. Ուժը կորցրած ճանաչել Պարետի՝ 2020 թվականի մայիսի 19-ի N 78 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը:
2. 24 ժամով արգելել «Մեղլայն Կլինիկ» ՍՊԸ-ի կողմից ք. Երևան, Ռոստոմյան փող., 17/1 հասցեում իրականացվող գործունեության շրջանակում նոր անձանց (այցելուների և հիվանդների) ընդունումը և սպասարկումը:
3. «Մեղլայն Կլինիկ» ՍՊԸ-ին՝ ձեռնարկել միջոցներ արձանագրված խախտումները անհապաղ վերացնելու ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսավարողին սույն որոշման մասին տեղեկացումը:
5. Տնտեսավարողի՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տիգրան

Ավինյան

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 22/05/20 15:53:04 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590